

Հ Ա Յ Ա Պ Ե Տ Ա Կ Ո Ւ

ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

XIV.

Նախընթաց բոլոր փառտերից աշքի է ընկնում այն հանգամանքը, որ հայուշլսանական գերդաստանը սկսել էր արգելն տեղի տալ ներկայումս տիրապետող անհատական ընտանեկան կազմին։ Այն երեսյթը, որ նահապետի մահամբ երեց որդուն ժառանգած իրաւունքները գերդաստանի անդամների՝ զլիաւորապէս իր եղբայրների նկատմամբ որոշ չափով սահմանափակուած են ու միանգամայն զուրկ են այն բնաւորութիւնից, որ ունէր երբեմն նրանց հայրը, բնականօրէն հետեցնում է, որ հայրական իշխանութիւնը՝ *patria potestas*-ը՝ իր ամբողջ ծաւալով ու բավանդակութեամբ կարող է տարածուել միմիայն այդ ժառանգողի որդիների ու կանանց և ոչ թէ եղբայրների կամ հօրեղբայրների վրայ։ Ահա թէ ինչու հօր մահուամբ եղբայրների բաժանումը աւելի ստէպ է տեղի ունենում, ել չենք առում հօրեղբայրների։

Տարաբազտաբար մեր ազգագրական գրականութեան մէջ եղած նիւթերը նահապետական գերդաստանի բաժանման իրաւաբանական կողմերի մասին շատ անբաւարար տեղեկութիւններ են տալիս։ Մեր բանահաւաքները ուշադրութեան չեն առել այդ երեսյթին յաջորդող ու նախընթացող իրաւաբանական մօմենտները։ Բայց և այնպէս բաւականանք տուեալ նիւթերով և սրանց հիման վրայ եղրակացնենք, թէ ինչ բնաւորութիւն և ինչ նշանակութիւն ունէին այդ բաժանումները հայ նահապետական գերդաստանի կեանքում։

Նահապետական գերդաստանն իր սոցիալ-տնտեսական կազմով միանգամայն գէմ է բաժանմանը, բաժանումով ամբողջովին խախտուում է այն հիմքը, որի վրայ է

կառացուած հայրիշխանական սկզբունքը, տապալում է այն իրաւաբանական-կրօնական ոչխարհայեացքը, ուսի միմնոլորդումն էր աճում, ծաղկում արիւնակից ազգականների համայնակեցութիւնը։ Ժազովրդական սովորութիւնների, նրա իրաւական հիմնարկութիւնների համեմատական ուսումնասիրութիւնները ապացուցանում են, որ ընդհանրապէս հին օրէնսդրական նօրմերի մէջ չեն գտնվում կանոններ ու օրոշումներ, որոնք յիշէին թէ բաժանումն մի անհրաժեշտ, օրինական միջոց է ընտանեկան համայնքից գուրս գործ, անջատուելու համար։ Նայելով այդ հին սովորութիւններին, հայրը կարող էր որդուն ազատ կացուցանել իր իշխանութիւնից, զիջանել նրան իր բարի կամքով համայնական ընդհանուր գոյրից որևէ է մաս և նրան հնարաւորութիւն տալ մի նոր ընտանիք ու տնտեսութիւն կազմելու։ Աակայն որդին ոչ մի իրաւունք չունէր պահանջել հօրից, որ բաժանուելու ատեն իրեն մտան հանեն անպատճառ տան ընդհանուր գոյրից։ Դա հասկանալի էր, երբ մտաքերենք նահապետական գերգաստանի ամբողջ իրաւական-անտեսական կազմը, երբ պատկերացնենք մեզ նահապետի հայրիշխանական իրաւունքները և համայնական գոյրի անձեռնմխելիութեան նշանակութիւնը։ Եթէ պատմականորէն նայենք, ակներե է, որ գերգաստանական բաժանումները իրանց ծագման ու զարգացման առաջին շրջաններում կարող էին տեղի ունենալ միմիայն նահապետի մահուանից յետոյ, երբ հայրական իշխանութիւնը որոշ չափով երերուում, թուլանում էր գերգաստանի սահմաններում։ Խակ յետագայում՝ արդէն գերգաստանական բաժանումները ի հարկէ օրինական կարող էին ճանաչուել հօր կենդանութեան յամանակ, երբ հանդէս էին գալիս առաջարիզի վրայ գերգաստանի բաղկացուցիչ աշխատաւոր անդամների ցանկութիւնները այդուղութեամբ, Մենք այստեղ երկար կանգ չենք առնում։ Այս վերին աստիճանի հետաքրքիր հարցի վրայ, որի նկատմամբ բաւականի շատ փաստեր կարելի էր առաջ բերել զանազան ժողովրդների իրաւաբանական սովորոյթների համեմատական հետազոտութիւններից։

Սովորաբար ժողովուրդը բացասական հայեացքով է նայում՝ գերդաստանների բաժանմանց վրայ։ Ժողովուրդը բաժանուելլը աւերիչ է համարում։ «Մէ թնդիրը էրկուս գըլի, մէ խարճը էրկուս կըդառնայ», ասում են Զաւախչքում, Բորչալիում «ժողովուրդը բաժանումն մեղք է համարում, որովհետեւ քանդում են հայրական սուրբ օջախը» Ուստի և երբ բաժանումից յետոյ մինի որդին կամ կենդանին մեռնում է, ասում են. բաժանքը նրա վրայ ընկաւ»¹⁾)

Եթէ դիտողութեան առնենք հայ նահապետական գերդաստանների բաժանման պատմութիւնը, կըտեսնենք, որ այդտեղ տեղի են ունենում՝ բաժանումներ թէ նահապետի կենդանութեան և թէ նրա մահուան տաենները։ Այդ երկու տեսակ բաժանման մօմենտները հարկ է խստիւ իրարից տարբերել։ Իրաբանչիւրն այդ մօմենտներից միանդամայն տարբեր իրաւաբանական նշանակութիւն ունի, զանազան իրաւունքների ու տնտեսական հետեւանքների է յանդում։ Երկրորդ մօմենտը՝ այն է նահապետի մահուանից յետոյ կատարւող բաժանումը, նկատի է առնում այլ իրաւաբանական հիմքեր, օգտում է այլ իրաւունքներով։ Այստեղ ասպարիզի վրա գրուած է մի գոյք, որ պիտի հասնի օրինաւոր ժառանգներին, որոնք ըստ տիրապետող սովորոյթների, իրաւական հայեացքների օժտուած են օգտուելու գոյութիւն ունեցող ժառանգական իրաւունքից։ Այդ մօմենտի մասին աւելորդ ենք սեպում այս էջերում վերստին կրկնելու, ինչ որ արդէն ասել ենք մեր համաւոր ուսումնասիրական փորձի մէջ, որ նուիրած էր հայ ժառանգական իրաւունքի հարցին²⁾) Կանգ առնենք միայն առաջի յիշատակած մօմենտի վրայ՝ նահապետական գերդաստանի բաժանման հօր կենդանութեան ժամանակ։

Բաժանուող որդին ազատում է միանդամայն հայ-

1.) Ե. Լալայեան—Աղքագըտական Հանդէս, X հատ եր. 129.

2) Տես. մեր «Հայ ժառանգական իրաւունքը», Աղքագըտական Հանդէս, գրքեր XVI և XVII

բական իշխանութիւնից և իսպառ խզում է իր բոլոր ստացուածքային կապերը հօր տան հետո նոյն իսկ հօր յետագայ մահուանից յետոյ նա այլևս իրաւուք չունի ըստ ժողովարդի սովորութական—իրաւական աշխարհայեացքի մասնակցել ժառանգութեանը, որ ամբողջովին անցնում է ի սեփականութիւն այն որդիների, որոնք անբաժան մնացել են իրենց հօր մօտ և շարունակում են ապրել նրա հետ միասին մինչև նրա մահը¹⁾ Բորչալիում եթէ Հայրը գերդաստանից իր բաժանուող որդուն «նրան հասանելիք բաժինն արդէն տուած է լինում, այդ որդին այլ ևս ոչ մի իրաւունք չի ունենում» Հայրական գոյքի վրայ, այդ բոլորը բաժանուում է անբաժան եղբայրների մէջ²⁾)

Եթէ որդիները բաժանուում են հօր կենդանութեան ժամանակ, նրանց ստացուելիք մասերի քանակները կախուած են բացառապէս հօր կամքից, որոշուում են հօրական իշխանութեամբ: Քանի որ իրական սոցիալ-տընտեսական յարաբերութիւնների մէջ նահապետն է ճանաչուում իրաւաբանական ներկայացուցիչ-սեփականատէր, իրաւանց անձը, կարգադրիչը ընտանեկան համայնական գոյքի նկատմամբ, ուստի և բնական է, թէ ինչ մեծ գեր է խաղում հօր գերդաստանական իրաւունքն, ծնողական կամքը: Հայրը, հիմնուելով այդ իր իշխանութեան վրայ, կարող է բոլորովին զրկել բաժանուող որդուն և բացէիրաց մերժել նրան որևէ մաս տալու ընդհանուր գոյքից: Զաւախըում յաճախ պատահում է, որ որդու վրայ բարկացած հայրը ոչինչ չի տալիս նրան, «կնիկը կուտայ ձեռքը և դուրս կէնէ»:³⁾ Նոյնն ենք տեսնում Բորչալիում և Ալեքսանդրապոլի գաւառում⁴⁾:

1. Егiazаровъ—Сельская Община въ Эриванской губ. 111.

2. Ե., Լալայեան—Ազգադրական հանդէս Խ հատ., եր. 128.

3. Ե., Լալայեան—Զաւախը, եր. 181.

4. Ե., Լալայեան—Բորչալի գաւառ, Ազգադր. Հանդ. Խ դ. եր. 127. Зелинский—Материалы по изуч. быта государства крестьянъ. т. I. стр. 22.

Բաժմանուելու ցանկացող որդու բայառձակ զրկումն իրեն հասանելիք մասից ընդհանրապէս չի ընդունուած գիւղացիական իրականութեան մէջ, ուստի և տեղի է ունենում իսխատ սակառօրէն ու բացառիկ, այսինքն, երբ որդին շուայլ և փուշ տղայ է. կամ իր ըմբոստ ու յանդուզն վարժունքով վիրաւում է հօրը և ընդհանրապէս իրեն պահում է իրրեւ «բէօջախ»։ Այս տեսակ որդու արտաքսման համար հասարակական կարծիքը չի դատապարտում հօրը, որովհետեւ որդու պարտականութիւնների վրայ է դրուած պահպանել հօրական օջախի բարի անունն ու պատիւը։ Երբ նա դաւաճանում է իր որդիական պարտականութիւններին և ստնակորին է անում՝ ձնողական տան պատիւը, այն ատեն հասարակական կարծիքը դրոշմում է նրան «բէօջախ» անունը, որ տանելի չէ ոչ մի որինաւոր տան մէջ։¹⁾

Սակայն, ինչպէս երեսում է, Բորչալիում զրկուած եղբայրը հօր մահից յետոյ գիւղական համայնքի միջամտութեամբ հաւասար բաժին է պահանջում իր եղբայրներից և ստանում²⁾։ Բայցի այդ՝ զրկուած որդին տակաւին հօր կենդանութեան ատեն իրաւունք ունի միայն մի պահանջ գնելու, այն է, իրեն չզրկել հողից։ Այսպիսի դէպքում՝ համայնքը կարող է այդ մի բանում միայն միջամտել. անա կարող է պահանջել, որ հողը յանձնէ այդ բաժանուազ որդուն այն հողաբաժինը որ նա ստացել է այդ որդու պատճառով համայնական հողերից»³⁾։

Թէև որդու բաժմանման ատեն, «հայրը լիազօր է տալու նրան, ինչ որ կամենայ, բայց երբէք աւելի, քան նրան կը հասնի»⁴⁾։ Սովորաբար ընդունուած է, որ հայրը հեռացող որդուն տայ այնքան անշարժ ու շարժական գոյք, որը անհրաժեշտ է նոր ընտանիք, նոր տնտե-

1) Егiazarovъ—Сельская община въ Эриванск. губ., եր. 110.

2) Լալայեան.—Ազգագրական հանգէս. X գիր., եր., 127.

3) Անդ, նաև Егiazarovъ—Сельская община въ Эриванской губ., եր., 109—110.

4) Ա. Լալայեան—Ազգագր. հանգէս. X գիր., եր., 127.

առւթիւն հիմնելու համար Բայց մեծ մասամբ բաժանուած զի ստանալիքի քանակը կախուած է այն հանդամանքից, թէ որդին բաժանուած է գերդաստանից հօր համաձայն նութեամբ թէ նրա կտորի հակառակ, վերջին դէպքում, որդու վարմունքը գատապարտելի է համարւում և սեպւում է իրու վիրաւորանք ծնողական դրացմունքի, որի պատճառով էլ բաժանուող որդին չի կարող յօյս գնել իր ստանալիք մասի առատ քանակի վրայ:

Այն հանդամանկներում, երբ հօր կենդանութեան ատեն, բոլոր եղբայրներն են ցանկանում բաժանուել, հայրը ի հարկէ այլ ևս անզօր է լինում օգտավելու իր հայրական իշխանութիւնից և զրկելու նրանց: Այս տեսակ բաժանման դէպքեր հանդէս են գալիս, երբ հայրն արդէն ծերացած է և տան կառավարութիւնից յետ քաշուած է լինում: Եօրչալիում այսպիսի դէպքերում «Եղբայրներն են հօրը բաժին տալիս» նրանք յաճախ մի այգի, մի արտ են յատկացնում նրան, որպէս զի նրա արդիւնքով ապրի, իսկ նրա մահից յետոյ կրկին բաժանուի եղբայրների մէջ: Երբեմն էլ մի գումար են տալիս նրան, որ մի մասը ծախսէ, միւն էլ թողնի թաղման և հոգէհացի ծախսերը հոգալու համար: Այս գումարը, որ 300 – 500 բուրլի է անում, կոչում է հոգէբաժին: Երբեմն էլ, եթէ նա գեռ ևս առոյգ է, եղբօր հաւասար մասն են տալիս: Հայրն ընտրում է որդիներից մէկին սովորաբար փոքրին և նրա մատ ապրում է, թողնելով իր ունեցածը նրան: Իսկ եթէ առանձին է ապրում, մահից յետոյ եղբայրները կրկին հաւաքւում են թէ թաղման ծախսերը հոգալու և թէ նրա ունեցածն իրենց մէջ բաժանելու»¹⁾:

Այսպէս ուրեմն նոհապետական դերդաստանն ժամանակի ընթացքում ենթակայ է կազմոլուծման, որի արմատները իսկապէս հարկ է որոնել հենց այդ հայրիշխանական ընտանիքի էութեան մէջ: Նահապետոկան

1) Ե. Լույեան – Աղդագրական հանդէս Ա. Հայտ, եր. 128

գերդաստանի այդ կազմալուծումն տրամաբանօրէն պիտի
առաջանայ սոցիալ-տնտեսական էվոլիւցիօնի այն ազգակ-
ների ներքոյ, որոնց ենթակայ է ընդհանրապէս մարդ-
կային ընտանիքը և ընտանիքի հիմք կազմող սեփականա-
տիրական աշխարհայեացքը:

Որ հնք են նահապետական գերդաստանի կազմալուծ-
ման այդ էական պատճառները:

XV

Մանօթանալով նահապետական գերդաստանի ներքին
կեանքի և գոյութեան սկզբաւնքների նշանակութեան հետ,
նկատում ենք, որ այդտեղ անձը միանգամայն կլանուած
էր համայնքի կողմից, կորցրած էր իր ինքնուրոյնութիւնը
և հպատակուած էր բացարձակօրէն նահապետին, հայրա-
կան իշխանութեանը՝ Մի խօսքով՝ անձնաւորութիւնը նա-
հապետական գերդաստանում՝ զրկուած էր բոլորովին ան-
հատական ազատութիւնից, մինչդեռ այդ նահապետա-
կան գերդաստանական կազմը մինչև այժմս էլ գուցէ,
մեր հասարակական իդէալներում, ժողովրդի անտեսա-
կան բարոյական յառաջդիմութեան վերաբերեալ հայեացք-
ներում սեպուել է մի հիմնարկութիւն, որը իբր իր գրա-
կան կողմերի շնորհիւ անհրաժեշտ է պահպանել, աւելի
ևս ծաղկեցնել, եթէ ցանկանում ենք հայ ժողովրդի,
դլխաւորապէս հայ գիւղացիութեան բարօրութիւնը, նրա
տնտեսական տոկունութիւնն ու գոյութեան յարատեսու-
թիւնը։ Նահապետական գերդաստանի մէջ միայն տես-
նելով ժողովրդի սոցիալ-տնտեսական յառաջդիմութեան
գրաւականը, հասարակական բարոյականութեան հիմքերը,
անշուշտ ազի արցունքներ պիտի թափէին այդ տեսակ
ընտանեկան կազմի իդէօլօգները, ականատես լինելով,
թէ ինչպէս իրենց փայփայած հասարակական հիմնար-
կութիւնները միմեանց յետեից հիւծւում, քայքայւում
ու տապալում են։ Սակայն մի կողմը թողնելով սենտի-
մենտալ զգացումները նահապետական գերդաստանի

նկատմամբ, խորասուզուենք սառն դատողութեամբ և անաշառ մտքով այն մթնոլուտի մէջ, ուր կեանք էր առնում մի ժամանակ հայրիշխանական ընտանիքը և տպա քայլ առ քայլ բեկանւում, ենթարկւում ժամանակի ու պատմութեան անողոք հարուածներին։

Անհատականութիւնը, որը նահապետական դերդառանի գոյացման առաջին օրից կլանուած, հալուած էր ընտանեկան համայնքի սահմաններում, իր կողմից էլ հիմք դարձու նուև նրա կազմալուծման։ Անհատը կաշկանդուած էր սուից մինչև գլուխ համայնքի շահերով։ Համայնքը բնաւ երբէք թոյլ չէր տալիս ընտանիքի բաղկացուցիչ առանձին անձերին, որ սրանք կարողանային իրենց անհատական տաղանդը, չնորհը, աշխատանքային գործունէութիւնը զարգացնելու, կատարելագործելու ըստ իրենց կամքի, ըստ իրենց յատուկ ընդունակութիւնների։ Մի չտեսնուած քան կը լինի հայ ընտանիքում, երբ հայ գիւղացին մի ինքնուրոյն արտաքոյ կարգի գործ սկսի առանց իր ընտանիքի նախանդամի, իր մեծի, Դա այն աստիճանի յանդուգն քայլ է հայ գիւղացու համար, որը առիթ կը դառնայ ընտանեկան ընդհարումների, երկպառակումների։ Ուրիշ խօսքով հայ գիւղացին առանց իր մեծի հրամանի իրաւունք չունի իր հսկագործական արդիւնքը իր կամքով տնօրինել, ինքն իրեն առ ու ծախս անել, իր վարը իր հայեցողութեամբ սկսել, ամեն մի գործում, ամեն մի քայլափոխում հայ ընտանիքը պարտաւոր է իր մեծի, իր նախանդամի հրամանով շարժուել, նրա իրաւունքով նիստ ու կաց անել¹⁾։

Հետեւապէս նահապետական գերդաստանը իր ամբողջ էութեամբ, թէ իր տնտեսական գործունէութեան տեխնիկայում և թէ իր սոցիալական յարաբերութիւնների մթնոլորտում հակուած է աւելի շուտ դէպի հին պապենական տանդապահութիւնը, պահպանողականութիւնը, բուտինան, քան թէ տոգորուէր ինքնագործունէու-

1) Սինանեան—Ընտանեկան բոնապետութիւն։ Անկախացուու 1908 թ., № 7.

թեան, ինքնուրոյն նախատեսութեան ու կենդանի յարչմարեցման սգով, Այս տեսակ հանդամանքներում հասականի կը լինեն և այն երկոյթները, որոնք այնքան բազմաթիւ են և այնպէս բնորոշ իւրաքանչիւր նահապետական գերդաստանի կեանքում։ Երեսյթներ, որոնք միանդամայն բացասական բնոյթ կրելով, կարծես անտեսեն եղել և չնայած իրենց ցայտուն, ահանելի գոյների, այս նուամենայնիւ լուսւթեամբ են ընդունուել հայ նահապետական գերդաստանի փառաբանողների կողմից։ Հետաքրքիր է շատ Անատօլ Լէրուա-Բօլիէլի՝ այդ Փրանսոիտական մանրազնին հետազօտողի կարծիքը լոել ուստի նահապետական գերդաստանների մասին, որոնց նա ուսումնասիրել էր Ուստաստանում իր եղած ատենք, «Զքաւոր ու խաւար ժողովրդների մէջ նահապետական՝ պատրիարքատական կողմը ոչ մի օգուտ չի բերում և չի կատարելագործում բարքերը Ակնյայտնի է, թէ որքան չարիքներ են առաջանում Ասկելքի մեծ քաղաքներում ազգաբնակչութեան խոռութեան ու բնակարանների նեղութեան պատճառով։ Նոյն երկոյթները նկատելի են նաև Ուստաստանում։ Աչ այնքան մեծ ծաւալով խրճիթում ապրում են մի քանի սերունդներ և բազմաթիւ ամուսնական զոյգեր։ Երկար ու ձիգ ձմեռնային գիշերներին հայրերն ու որդիները, եղբայրները և որանց կանայք քնում են իրար հետ մէջ ընդ մէջ ուստական մեծ վասարանի շուրջը։ Զորմանալի չէ, որ մօտկից դիտելով դիւզական կացը, մենք պիտի անշուշտ հանդիպենք սեռական խառնակ յարաբերութեանց այնպիսի գէպերի, որոնք վշացնում են ոչ միայն մարմինը, այլ և հոգին։ Նոյն իսկ այն ատեն, երբ դիւզացու ամուսնացած որդիները ապրում են, թէի միենայն բագում, բոյց և տարբեր խրճիթներում, այնուամենայնիւ նրանց տմուսնական յարաբերութիւնների անձեռնմխելութիւնը ու մաքրութիւնը չի կարելի ապահոված համարել։ Նման միջնագարեան սէնիօրի, որի անձի համար նրա ճարտ-դեղջկուհիները պարտաւոր էին իրենց մարմնի գնով յայտնի տեսակի

բնական տուրքեր հատուցանելու, տան նահապետն էլ իր դիրքի շնորհիւ երթեմն խրացնում է որոշ իրաւունքներ նաև իր ստորագրեալ հարսերի վերաբերմամբ։ Իբրև մեծ և իբրև հասակաւոր որ յայտնի է ընտանիքի մէջ սպիտակ մօրում, ծերուկ անուններով, նա ստէպիչարն է գործ դնում իր անշափահաս որդիների կախեալ գրութիւնը և անթոյ լատրելի հարկեր է հաւաքում սրանց նորատի կանանցից։ Ընտանեկան օջախը այսպիսով սրբապղծւում է հենց այն իշխանութեան ձեռքով, որի պաշտառորութիւնն է այդ գերդաստանի հսկիչը, պահպանողը լինելու¹⁾)

Արգեօք նոյն պատկերներները չենք տեսնում։ Հայ նահապետական գերդաստանի ներքին կեանքում, կենցաղի ձեւերում։ Վերոյբերեալ նկարագիրը տկամայ տչքի տռաջ է ունենալու խրաքանչիւր հայ հետազօտողը, երբ ծանօթանում է հայ իրականութեան, հայ ժողովրդական բաշքերի հետ։ Հետաքրքիր է այդ տեսակէտից մի նկարագիր հայ ընտանեկան ներքին կենցաղի, որը դըտնում էնք Սիսիանի վերաբերմամբ։ «Երբ քնելու ժամն է հասնում, — իսկ սա շատ ուշ չէ լինում, — տռաջ տան մեծը բոլորի ներկայութեամբ, ազօթք շնչալով, հանում է շորերը և պառկաւմ։ Նրանից մի քիչ յետոյ պառկաւմ են միւս տղամարդիկ, միշտ աշխատելով, որ կրտսերը աւագից առաջ չպառկի։ Այս հանւում են տատը և աւագ հարսները, իւրաքանչիւրը տեղաւորուում է խր ամուսնու կողքին, զաւակը մօն առած։ Ամենից վերջը մնում է փոքր հարսը, որ զգուշութեամբ հանգցնում է ճրագը, հանւում և գնում է ամուսնու մօն։ Սափրաբար ամբողջ գերդաստանը ամտաը էյվանում, իսկ ձմեռը տանն է քնում, մինի անկողինը միւսին մօն։ Միայն փոքր հարսինը ոկզրներում առժամանակ տան օթախումն» են ձգում՝²⁾

Միայն նաև ով իրօք մօտկից ծանօթ է հայ նահապետական գերդաստանի բարոյակոն մթնոլորդին, այն-

1) М. Ковалевский—Происхождение семьи и собственности.
Եր. 99—100

2) Ե. Լալայեան Սիսիան, Եր. 137.

տեղ տիրող խաւարին, մշուշապատ ներքին կեանքին, ընդունակ է հաստատելու, որ հայ նահապետական գերդաստանական կազմն էլ շատ չի տարբերւում վերոյիշեալ ռուս գերդաստանից։ Այստեղ մի կեանք է տիրում, որը իրեւ խորհրդաւոր սփինքս, լուռ և մունջ կանգնած է կողմնակի հանդիսատեսի առաջ և փայլում է լոկ իւր արտաքին տեօքով միամիտ և մակերեսութօրէն ուսումնասիրողի աշքերին։ Որքան գաղտնիքներ կան պարփակուած, որքան ընտանեկան խորհրդաւոր պատմութիւններ են թաղուած այնտեղ և բնաւ լոյս աշխարհ չեն տեսնում, երբէք բանահաւաք ազգագրագէտին չեն հասնում։ Իսկ ով պիտի պատմի այդ բոլորը, արդեօք չխօսկան կիները, թէ այն կեսրայրներն ու այն մարդիկ, որոնք որատճառ են դառնում բարոյական անկման և սըօզում ամեն ինչ արտաքուստ անմեղ, անարատ ընտանեկան բարքերով։ Աւելորդ ենք ուեպում ծանրանալու այս հարցի վերայ, որը մեզ շտա կը շեղէր բուն նիւթից։

Յամենայն գէպս պէտք է շեշտել միայն, որ հայ գերդաստանական կազմը, ինչպէս էլ որ դա լինէր՝ լաւ թէ վատ, բարոյական թէ անբարոյական իր ներքին բարքերով, իրերի օրյեկտիւ զարդացմամբ, ենթակայ էր անցեալ դարսւ երկրորդ կիսից արագաքայլ կազմալուծման։ Այսօր մեր առաջն են նրա վերջին մնացորդները։ Հայ նահապետական «օճախից» մնացել են լոկ «պուճախներ»։

Երբ աշքի ենք անցկացնում այն բոլոր փաստերը, որոնք մեր բանահաւաքները առաջ են բերում իրեւ պատճառներ հայ նահապետական գերդաստանի բեկանման, կըտեսնենք, որ նրանք բաղմաթիւ են։ Սակայն նրանց յիշած բոլոր փաստերը խոկապէս ոչ թէ պատճառներ են էական, հիմնական մտքով վերցրած, այլ աւելի շուտով առիթներ այդ կազմալուծման ու մտամբ հետևանքներ աւելի սկզբնական էական պատճառների։ Ազգագրութեան մէջ յիշատակած բազմաթիւ փաստերից առաջ ենք բերում, գասաւորելով էական նշանակութիւն և ընդհանուր բնաւորութիւն կրող օրինակները։

Բուլանըխում, ընտանիքի բաժանման սկիզբը գլխաւորապէս կանայք կըդնեն, երբեմն և մարդիկ կանայք խմբուած լինելով տան մէջ և մանաւանդ բծախնդիր ընաւորութիւն ունենալով, չնչին բաներու առիթով վէճու կոիւ հանելու շատ տոփիմեներ կունենան, այդ վէճերը երբեմն այնքան սուր կերպարանք կըստանան, որ մարդիկ ուրիշ միջոց չգտնելով՝ եղբայրական խաղաղ առաջարկութեամբ կըբաժանուին իրարմէ, երկրորդ և ամենամեծ պատճառը գեռ հօր կենդանութեան ժամանակ որդոց առանձին գրամ պահելու և հարստութիւն դիզելու ամենավատ սովորութիւնն է (սարմիա)։¹⁾

Զաւախքում ժողովուրդը բաժանման գլխաւոր պատճառը տեղերկնիկների անհամաձայնութիւնն է համարում, հետեանքը կոիւներ են, որոնք առաջանում են նրանից, որ հարսերը չեն ցանկանում նախնի սովորութիւնով իրենց պարտականութիւնները կատարել տնային աշխատանքների վերաբերմաբ։ Բացի գրանից այդ տեսակ կոիւնների առիթ են դառնում հարսների փոխադարձ գողութեան դէպքերը, սկեսուրի աշառու և խիստ վերաբերմունքը դէպի հարսերը, կանանց արնագները, որոնցով փորձում են օգտուելու ամուսինները իրենց կանանց գիտութեամբ և գերգաստանի միւս անդամներից գաղտնիու առանձին շահեցնելով գուրսը։²⁾ Գրեթէ նոյն երևոյթները գտնում ենք Բորչալիի գաւառում։³⁾

Սակայն կան նաև բազմաթիւ փաստեր, որ ոչ միայն կանայք, այլ և այր մարդիկ էլ պատճառ են գաւանում գերգաստանի կազմալուծման։ Բուլանըխում «գրամատէր եղբայրները առաջուայ նման սիրով և սրտացաւանքով չեն աշխատէր տան օգտին, «իմ ու քում»-ի հետ ծուլութիւնն

1 Բենսէ—Բուլանըխ, եր. 149։ Նոյն գաւառի մասին տես «Բիւղանդիոն», 1899 թ. № 870 և 871. «Օճախէն-պուճախ» յօդուածը։

2 Ե. Լուայեան-Զաւախք, եր. 181—183.

3 Նոյն—Բորչալիի գաւառ. Ազգագրուկան Հանդէս հատ. X, եր. 126—129.

ու անտարբերութիւնը կը մտնեն տանից ներս և քանի
հատ սովոր ունեցողի համար այլիս տան շեն կամ աւեր
մնալը հօգ չի պատճառէր, որովհետեւ վստահ է (սարսկայի
տէրը), որ եթէ տունը քանդուի (քաժանուել) էլ, ժա-
ռանգութեան մի մասին գոնէ տէր է ինքը և պատրաս-
տի դրամով կարսղ է նոր տուն ու տեղա գնել և ապրել,
թէրեւ տռաջուանից ուելիր լաւ,¹⁾ նոյնն ենք տեսնում
Զաւախըւմ. «Եղբօր չափահաս որդիների աշխատանքն
ընդհանուրին է պատկանում և անյապաղ յանձնեում է
տան մեծին, սակայն սա զրկուած է ժառանգութեան իրու-
ունքից. 20—30 տարի աշխատող որդու հայրը կամ եղ-
բայրը հաւասար բաժին է առնում գուցէ 15 տարեկան
եղբօր հետո նոյն հիմունքով էլ, երբ եղբայրներից մի քա-
նիոը շատ որդիներ է ունենում, միւսները չեն յօժարում
հաւասար աշխատել, քանի որ միւս եղբօր որդիները շատ
են ուտում»²⁾)

Վերջապէս գոնում ենք ազգագրական քանահաւաքու-
ծուի մէջ աւելի հիմնական ու ընդհանուր պատճառները
«Պարապմունքների տարբերութիւնը, որ շատ անգամ առաջ
է դալիս վարելահողերի պակասութիւնից» Գերդաստանի
անդամներից մի քանիսը դաղթում են՝ քաղաքներում
աշխատելու, ընդունում են այնուեղի գաղափարներն ու
սովորութիւնները, իրենց վաստակն ամբողջովին տան մե-
ծին չեն ուղարկում, շատ անգամ ցանկանում են իրենց
կնոջը իրենց մօտ տանել, իրենց երեխային ուսման տալ,
մինչդեռ դերդաստանը հակառակում է, որովհետեւ միւս
երեխաներին ուսման չեն տռած կամ բոլորովին չի կա-
րելի տալ. Անդամներից մի քանիսն էլ արհետաներ են ուս-
վորում և աւելի վաստակելով քան երկրագործ անդամնե-
րը, ցանկանում են քաժանուել, իրենց ամբողջ վաստակը
իրենք վայելելու»³⁾) Հոմանիշ երեսյթներ ենք գոնում

1 Բէնսէ—Բուլանըխ, եթ. 150

2 Ե. Լալայեան—Զաւախը, եթ. 182

3 Ե. Լալայեան—Բորչալիի դաւառ. «Ազգադրական հան-
գէս» X հատ. 126 եթ.

Զաւախքում,¹⁾ և այլուր²⁾)

Գերացիշեալ ըոլսր ժամաներից հետեւմ է մի անժխտելի եղբակացութիւն, որ անհատականութիւնը գլուխ է քարձրացնում գերդառատանի համայնական կեանքում։ Այդ անհատական բնազդն է, որ քանդում, տապալում է հայրիշխանական ընտանիքի ամբողջ շենքը, ստիպում է գերդաստանի չափահաս անդամներին պահանջելու, որ իւրաքանչիւրին տրուի իր անձնական տնօրինման աղատ իրաւունք։ Մնաւում են անձնական շահեր համայնականի վոխարէն։ Հենց այդ անհատականութեան գիտակցութեան արթնացումն է, որով կարելի է բացատրել այն մի անդամ արդէն չեշտած երեսյթը, որ աւագ եղբայրը ժառանգելով հօրը նահապետական իրաւունքները գերդաստանում, այնուամենայնիւ չի վայելում այն իշխանութիւնը, որով օժտուած էր նահապետը։

Սակայն այդ անհատականութիւնն էլ ինքնըստինքեան մի երեսյթ է և ոչ պատճառ։ Դա մի հետեւանք է աւելի հիմնական, էական պայմաններից բղխած, մի սկզբնական պատճառից հետեւզ, որի վրայ անհրաժեշտ է կանգ առնել։

XVI

Անհատականութիւնը հայ նահապետական գերդաստանի մէջ առաջանում է զուտ տնտեսական պատճառներից, որոնք և խոկապէս կարելի է սեպել հայրիշխանական ընտանիքի կազմալուծման էական գործոններ։ Տնտեսական տիրող պայմաններում զարգացած նոր արտադրողական յարաբերութիւնները խախտում են համայնական սեփականատիրական աշխարհայեացքը։ Աշխատանքի հասարակական բաժանումն քայլայում է նահապետական գերդաստանի ամբողջութիւնն և ստեղծում է մասնաւոր, անձնական սեփականութեան ձգտումներ։

Ներկայ աշխատութեան սկզբներում արդէն առիթունցանք վերլուծելու նահապետական գերդաստանի տըն-

1 Յ. Լալայեան—Զաւախք, Եր., 182.

2 Зелинскій—Народн.—юридич. обычай.

տեսական շինքը, նրա սեփականատիրութեան խիստ համայնական բնոյթը։ Նահապետական գերդաստանի տնտեսական կազմի այդ համայնականութիւնը բղխում է արտադրութեան գերիշխող եղանակներից, որոնք ըստ իրենց կարգի պայմանաւորում էին նիւթական բարիքների բաշխման ու սպառման այս կամ այն ձեի տիրապետումն։ Նահապետական գերդաստանի միաբանացած, այլապէս համայնական սպառումն, որի հետ արգէն ծանօթ ենք, բնականօրէն հետեւում է ու անհրաժեշտօրէն ծագում է արտադրութեան համայնական, համահաւաքական ձեից։ Արտադրութեան այդ ձեն էր, որ բնական տնտեսութեան շրջանում ամուր էր պահում համայնական սեփականութեան սկզբունքը, որով զեկավարուում էր և իւր գոյութիւնը առաջ տանում հայ նահապետական գերդաստանը։ Վերջապէս նոյն այդ արտադրողական համայնական ձեն էր պատճառը, որ գերդաստանական համայնական գոյքի մէջ տեղի ունէին այնպիսի բացառութիւններ, ինչպիսին էր կանանց «արնագինը» կամ «ասրմիան» (Յուլանընում)։ Որովհետեւ արնագինն ու սարմիան գոյանալով նույիտառութիւններից, որոնք հարսերը ստանում էին հիւրերից իրենց նշանդրէքի, հարսանիքի, երեստեսուկի այլ և ծէսերի տտեն, չէին ներկայացնում համայնական ձեւերով ստեղծուած բարիքներ, ուստի և չէին կարող մտնել գերդաստանի համայնական սեփականութեան մէջ։

Սակայն ինչպէս էին առաջ գալիս համայնական արտադրողական այդ ձեւերը։ Նախնական մարդկանց մատառը՝ ֆիզիկական ոյժերի նւազ քանակը, գոյութեան գուկախոր տիրող բնական՝ տնտեսական պայմաններում սափառում էր արենակից խմբակցութիւններին միացնել իրենց անհատական ճիգերը և ընդունակութիւնները կեանքի պահպանաւթեան կոխ մզելու արտաքին բնութեան ու շջապատող միջավայրի գէմ։ Այս պայմաններում հանդէս էր գալիս տնտեսական շահերի ընդհանրութիւն, ուրեմն և համայնական գոյքի սեփականատիրական սկզբունքը։ Այսպիսով ընտանեկան համայնքը աճեց ու զարդացաւ

տնտեսական պայմաններում։ «Ծնտեսական պայմաններ ասելով, որոնք համարում ենք հասարակականութեան պատմութեան գլխաւոր հիմունքը, հասկանում ենք այն ձևերն ու հղանակները, որոնց օգնութեամբ տուեալ հասարակական գարեցիանի մարդիկ արտադրում են գոյութեան միջոցներ», բացատրում է ինգելոր։ Մարդկութեան կուլտուրական զարգացման ընթացքի համեմատ, աճում են նաև նրա կարիքները, իսկ գոյութեան միջոցների պիտանի նիւթերի քանակը սահմանափակ է։ Եւ նիւթի քանակի այդ յարաբերութիւնը զգալի է գառնում՝ ազգաբնակութեան աճման հետ միասին։ Արա համեմատ էլ անհրաժեշտութիւն է զգացւում՝ բարեփոխել, կատարելագործել արտադրութեան տեսակներն ու եղանակները, այսինքն ծախոել աշխատանքը ըստ կարելոյն տնտեսական կերպով։ «Սակայն հասարակ գիտողութիւնն էլ ցոյց է տալիս մեզ, որ ոչ բոլոր մարդիկ ի բնէ հաւասար կերպով ընդունակ են բոլոր աշխատանքներին։ Անհամների տարբեր մարմնական ու հոգեսոր յատկութիւնները պայմանաւորում են աշխատանքի յաջողութեան նկատմամբ զգալի տարբերութիւններ։ Եւ այն տարբերութիւնը հասարակութեան պրօդրեսսիւ զարգացման հետ, կամ այլապէս ասած, աշխատանքի միջոցով կատարւող նպատակների աճող բազմակողմանիութեան հետ, աւելի և աւելի մեծանում է։ Արան միանում է նաև երկրորդ հանդամանքը։ Աշխատանքի իւրաքանչիւր նոր նպատակը մեր ընութեան մէջ գտնում է իրեն ընդդիմագրութիւնն, որը սակայն սովորութեան շնորհիւ աստիճանաբար նուազում է և ի վերջոյ իսպառ չըանում։ Այդ բոլորը աշխատանքի կիրառման մինալորտի սահմանափակման մէջ և ամեն տեսակ ընդունակութիւններից օգտուելու նպատակով նրա ըստ կարելոյն մեծ անհատականացման մէջ, ստիպում է մեզ տեսնել տնտեսութեան մի պահանջ։»¹⁾

Սյապիսով հասարակութեան տնտեսական կեանքում գոյանում է աշխատանքի բաժանումն, որի ազգեցութեան

¹⁾ K. Bücher-Arbeitsgliederung u. soziale Klassenbildung.

ներքոյ ստեղծւում է անհատականութեան հասկացողութիւնը, ձգաւումը, Այդ նոր հասկացողութիւնը աստիճանաբար քայլքայում է ընտանեկան համայնքի հիմքերը և տանում՝ է դէսի բեկանում։ Անհատականութեան ազդեցութեան ներքոյ ընտանեկան համայնքի խրաբանչիւր չափահաս անդամը լեցւում է այն գիտակցութեամբ, որ իրեն արուեր իր անձնական ստացուածքների անօրինման լիսկատար իրաւունքներ, արուեր ինըն իրեն պատկանելու իրաւունք, համաձայնեցնել իր գործողութիւնները սեփական ցանկութիւնների հետ, մի խօռքավ ծագում՝ է մի ձրգտում, այն է երաշխաւորել իրեն մի որոշ կենսական ազատութիւն։ Ահա այսուեղ է իսկապէս ասպարէզ գալիս մասնաւոր սեփականութեան հարցը, այն նշանակալից երեսը, որ անմիջական առիթ է հանգիսանում հայ իրականութեան մէջ կատարւող նահապետական գերգասատանների բեկանման։

Բնական անտեսութեան անկմամբ, երբ հասարակական անտեսական գործունէութեան մէջ հանգէս են գալիս նոր գործօններ, ակներեւ է, որ այն անտեսական պայմանները, որոնց միջավայրում ապրում էր հայ գիւղացիութիւնը և իւր նիւթական գոյութիւնը պահպանում, այլևս չեն կարող նախկին նշանակութիւնն ունենալ։ Միւս կողմից էլ հայ ազգաբնակութեան քանակի աճումը լրացնում էր անտեսական պայմանների այդ աննպաստ ու իրերի բէալ կազմին անհամապատասխան գասաւումն։ Կապիտալի յաղթական գնացքը և արգիւնաբերական արտադրութեան նոր եղանակները արգէն վազուց երերել են իր տեղից ու միանգամայն յեղաշրջել այն անտեսական գործունէութեան քնոյթը, որը այնպէս յատուկ էր նախկին գարերի հայ իրականութեան և որի վրայ էլ հիմնուած էր հայ նահապետական գերգասատանի սոցիոլ—անտեսական բովանդակ կեանըի պատմութիւնը։

Խ. Սամակեան.

Առաջին առաջ պատմութիւնը կամ Վեպը